



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Ս

ՀՄԱՅՆԱԿ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՆՌՈՅԱՆ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ՝ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿՆ ՀԱՅՈՒՆ

Նորին Ս. Օծուխուն Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, տարվույս 25 օգոստոս թվակիր սրբատառ կոնդակով, կհրահանգե՞ «համագային հանդիսությամբ տոնել, պանծացնել սուրբ հիշատակը Մեսրոպ Մաշտոց վարդապետին, անօր ծննդյան 1600-ամյակի առիթով, հոկտեմբեր 14-ին, Թարգմանչաց վարդապետներու տոնին»:

Հայուն համար ինչ կա ավելի նվիրական, վսեմ ու արժեքավոր, քան Հայկազնյան այբբենարանն հորինող հանճարին, հայ գրերն ստեղծող անզուգական հայ ուղեղին ծննդյան հոբելյանը:

Ս. Մեսրոպ Մաշտոց իր անհատնելի երկով, հայոց համար հավիտենապես այժմեական իր գործով, կհանդիսանա մեր պատմության ամենեն պայծառ միտքը, մշտակա իրավամբ: Մեծագործություն մը, գոր տասնըվեց մրկավար դարեր անգոր մնացած են նսեմացնել:

Հայ հղացումին ամենեն ազնվական և հարգատ մեկ վայրկյանին, հայուն համար ամենեն հազվագյուտ պահուն, ծնավ Մեսրոպ Մաշտոց:

Հայուն ամենեն ջինջ և մաքուր ընդերքին ծնունդն է ան, հայուն ստեղծագործ հանճարին այն ժայթքը, որ հայության կյանքը երաշխավորեց գալիք դարերու բոլոր արհավիրքներուն դեմ, պատմության բոլոր փոթորիկներուն դեմ:

Հայ դարերու բացառիկ մեկ պահուն հայ իմացումին երկունքն ու խտացումն է ան, որ հայն օծուց ժամանակը արհամարհող կենսունակությամբ: Հզոր կայսրություններ եկան ու գացին, բայց Ս. Մեսրոպի հորինած աղանդադար գիրերու շնորհիվ հայությունը զերծ մնաց աշխարհակործան վերիվայրումներից և վերապրեցավ:

Ս. Մեսրոպ ոչ միայն հայոց պատմության ամենահզոր դեմքն է, ամենամեծ միտքը. այլև ազնվական բարերարը: Հայուն «բեղուն բարիքը», գոր վաթսուներկու հայ սերունդներ վայելած են, և ո՞վ գիտե, տակավին քանի հայ սերունդներ ալ պիտի սնանին անկե: Անսպառ բարիք մը, որուն շնորհիվ անցյալի, ներկայի հայ ուղեղները ստեղծագործած են և ապագային ալ պիտի ստեղծագործեն հայ դպրություն, հայ գրականություն, հայ արվեստ, հայ հավատք, հայ գիտություն, հայ ինքնություն և հայ գիտակցություն, մեկ խոսքով հայ մշակույթը դարեր անընդատ, մշակույթ մը, որ հայությունը տարած հասցուցած է աշխարհի քաղաքակիրթ շափանիշի բարձրության:

Հայ մտածումի և հավատքի անսպառ շտեմարանն է ան, որմե սնած են և պիտի սնանին գալիք դարերու անհամար հայ սերունդները: Հայուն իմաստությունը հավետ ջանքող անմեռ վարդապետ-վարժապետն է ան:

Ազնվական էր ան ոչ միայն ծնունդով, այլ մանավանդ մտքով ու հոգիով, որուն բացահայտ գրավականն է բյուր-բյուրավորներու ցանկալի արքունական դիվանագլուխության ոտնահարումը, երկրային փառքին արհամարհումը և անոր Անեղեն առինքնումը:

Նման Տեր Հիսուս Քրիստոսի, նման Իսրայելի մարգարեներուն, ան իր առաքելության ձեռնարկելի առաջ, առանձնացավ մենության մեջ, մխրձվելու համար Անհունին իմացողության, ճգնողական առաձնության մեջ հաղորդվելու մնայունին, տևականին, որակին քաղցրության, թաթիվելու աստվածային շնորհներուն մեջ: Եվ երբ ան դուրս եկավ խոսելու և գործելու, ինչի որ մոտեցավ ստեղծագործեց, անոր միտքը ինչ որ հղացավ, անոր հոգին ինչ որ շնչեց, անոր սիրտը ինչ

որ կամեցավ մնալունին, տեականին կնիքն ունեցավ իր վրան:

Անոր մեղրածորան քարոզչության շնորհիվ ոչ միայն Գողթնյաց և Սյունյաց հայերը հողիով լուսավորվեցան, այլև Վրաստան և Ադրբեյջանի աշխարհը քրիստոնյա դարձան: Անոր առաքելության լուսավորությունը սերունդն սերունդ դեռ կպահան իր կենսունակությունը:

Հոգիներու լուսավորումն հաջողվեցավ և ուղեղներու բեղմնավորումն էր անոր մեծ հոգը: «Աննինջ հսկող այդ տիտանյան հայ տեսանողը» իր հրաշագործ ուղեղը ձմեռեց և ստեղծեց օտար խոժովներուն դեմ հայ լեզուն անխոցելի դարձնող ազամանդյա գրաճը՝ հայ այբուբենը, որ հղավ անսպառ աղբիւր իմացական սնունդի:

Հայերն գրերու անդրանիկ վարժապետին անմահ շունչն ալ անցավ հայ լեզվի գրերու վրային ու խոսուն դարձուց զանոնք առաջին հայ աշակերտներուն ուղիմ ուղեղներուն, ճղնիկն մինչև վարդան Մամիկոնյան, մինչև Կորյուն, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Տաթևացի և մինչև անհատնում շարանը հայ գրերու ուսանողության մինչև այսօր:

Հարկ էր ուսանող մանկավույն վայրն ալ հանձնարարել և հանձնաձևը: Մտածումի այդ ջահերն իրենց շտեմարաններն ու լուսարարներն ունենալու էին: Կորով ու կամք էր անկ: Հացեկաց գյուղի այդ անմահ հսկողը ծրագրեց այդ լուսո շտեմարաններն ու վառեց ջահերը, որոնք դեռ կմնան ու հուր կուտան հայ մատղաշ ուղեղներուն:

Հարկ էր, որ Աստված խոսեր յուրաքանչյուր հայու իր առանձնության մեջն ալ, ուղած ատեն, ուղած տեղը: Հարկ էր, որ Աստուծո շունչը հոսեր հայ հոգիներեն ներս հայերն լեզվով, ստեղծագործ Սուրբի բացակայությանն ալ, անհունորեն, ազատորեն, հարազատորեն, յուրաքանչյուր հայ բաժակի տարողության համեմատ... «Աշխարհի լույսը» պետք էր շոշափելի ըլլար հայ հավատացյալի ձեռքերուն մեջ, ու լուս խոսեր դրերու ընդմեջն հայ աչքերուն: Հայ մեծ սուրբին միտքն ու հոգին հոս ևս հրաշագործեցին: Աստուծո պատգամներու ավագան այդ մեծ Մատանը դարձավ հայուն Աստվածաշունչը և «թագուհի թարգմանությանը»:

կոթող մը ինքնին, ժամանակներն վեր, հայ հավատքի ազնվության, հայ լեզվի գեղեցկության, հայ մտքի նրբության, հայ հոգիի տարողության. բյուրեղյա անգին կոթող մը, որուն ամբողջական արդի վերձանականն ընկ շհամարձակեցան դեռ վերջին դարերը:

Նավարի մեջ վառված լույսը ծիր չունի: Ս. Մեսրոպ հայուն մտքի հոգիի անհատնում լուսարձակն է, անմատչելի աշտարակը, հոգի մը և միտք մը միանգամայն, որուն ջերմության մեջ ապրած են, կապրին և դեռ պիտի ապրին բոլոր դարերու հայ մտքերն ու հոգիները, որուն զորության և ազդեցության մեջ կմնան ու պիտի մնան հայ սերունդները:

Ս. Մեսրոպի հոգիեն ու մտքեն հոսած լույսի ջերմությունը դեռ կանցնի բոլոր հայ սերունդներու հոգիեն և մտքեն ու կկենսավորեն, կպողաքերի անդրեղհատ, անվերջ...:

Մշտահոս, անսպառ մտքի և հոգիի լույսի ուղիս... Որքան հայը կա ու կապրի, նույնիսկ, Աստված չընե, հայու մահեն հաջորդ, հայու ստեղծագործությունը, մշակույթը, Ս. Մեսրոպի մեծագործությունը պիտի մնա մարդկության հետ և հիացնեն անոր իսկության անհաղորդ եղողները:

Ս. Մաշտոց անկորնչելի, անսպառելի հոգի մը և միտք մըն է, որմե պիտի սնանին բոլոր հայ սերունդները, որուն շունչին պարունակին մեջ հասունցավ հայուն ոսկեդարը, որուն լույսին մեջ ուռճացան Վարդանանց փրկարար խիզախումը և անոր հաջորդող հայ գյուցազնությունները:

Իբր հոգի և միտք, իբր գիտակցություն և ինքնություն, ամեն հայ ծնունդն է Ս. Մաշտոցի ճառագայթարձակ էություն:

Ս. Մեսրոպ հայու երկնային ավիշով լեցուն, աստվածային ստեղծագործ ավյունով լեցված բաժակն է, որմե ըմպած են և պիտի ըմպեն հայ ժողովուրդի սերունդները բոլոր դարերուն, բոլոր հորիզոններուն...:

Ամեն իրավ հայու պարտքն է հարց տալ ինքնիրեն, իբր կյանք այս իմաստության շառալին, իբր ժառանգ այս տիտանյան հրակային, ստեղծագործ հայ այս Սուրբին, թե՛ «Ծն ինչո՞վ արժանի եմ անոր էության»:

«Պաշտա՞նք և փա՞նք սփռելիազործ Ս. Մեսրոպի անվան և անոր անմահ գործին»:

